«Հաստատում եմ»

«Երեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Մ.Վ.Մանուկյան

_____

«08» սեպտեմբեր 2022թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արեգ Արտակի Պետրոսյանի «12 մատնյա աղու թափածակված խոցի վիրահատական բուժման բարելավումը» թեմայով, ԺԴ 00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը

12 մատնյա աղու խոցի թափածակումը շարունակում է մնալ խոցային հիվանդության տարածված բարդություն, չնայած վերջին տասնամյակներում խոցային հիվանդության պահպանողական բուժման հաջողություններին: Այն ունի ներ և հետվիրահատական բարդությունների ու մահացության բավականին բարձր տոկոս: Թափածակված խոցով հիվանդների մեջ երիտասարդ և միջին տարիքի հիվանդները կազմում են բավականին մեծ տոկոս, որն ընդգծում է խնդրի սոցիալական նշանակությունը:

Ներկայումս 12 մատնյա աղու թափածակված խոցը ցուցում է անհետաձգելի վիրահատության համար, սակայն կատարվող վիրահատությունները խիստ տարբերվում են իրենց ծավալով՝ թափածակման անցքի կարումից մինչև մասնահատումներ: Իսկ նախորդ դարի վերջից սկսած վիրաբույժները սկսել են կիրառել նաև լապարասկոպիկ եղանակով կատարվող վիրահատություններ: Տարբեր վիրաբույժների կողմից կատարված հետազոտությունների տվյալները ցույց են տվել լապարասկոպիայի առավելությունները բաց եղանակի հանդեպ:

12 մատնյա աղու խոցի թափածակման կապակցությամբ կատարված վիրահատությունները ողջ աշխարհում ունենում են բավականին բարձր տոկոսի հասնող բարդություններ, իսկ լապարոսկոպիան ինքնին նվազեցնում է նրանց մի մասի չափաբաժինը: Սակայն երբեմն հնարավոր չի լինում կատարել լապարասկոպիա և այն ուղեկցվում է բարձր տոկոս կոնվերսիաներով և բարդություններով: Նույնիսկ տարբեր մասնագիտական ասոցիացիաների ուղեցույցերում նշված է, որ խոցերի թափածակման ժամանակ լապարասկոպիան պետք է կիրառել որոշ ընտրողական դեպքերում:

Ըստ թափածակված խոցերի բուժման վերաբերյալ գրականության տվյալների շատ հեղինակներ գտնում են, որ այս հարցի վերաբերյալ մինչ այժմ չկա ընդհանուր կոնսենսուս:

Նշվածից հետևում է, որ, դեռ քննարկվող և կարևոր հարց է մնում հիվանդների ընտրությունը լապարասկոպիկ միջամտությունների համար:

Պետք է հավելել նաև այն փաստը, որ մինչ տվյալ աշխատանքը Հայաստանում 12 մատնյա աղու թափածակված խոցի վիրահատական բուժման մեջ լապարասկոպիայի կիրառումը լուսաբանված է եղել ոչ բավարար, չեն եղել հրապարակումներ այդ թեմայով:

Վերը նշվածով էլ հենց պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Աշխատանքը և ստացված տվյալները

Ատենախոսը հավաքագրել է հետազոտության մեջ տեղ գտած 120 հիվանդների հետազոտության տվյալները, ուղեկցող հիվանդությունները, նախկինում տարած վիրահատությունները: Գնահատվել է հիվանդների վիճակը ըստ ASA PS դասակարգման համակարգի և հետվիրահատական բարդությունների կանխատեսման Boey բալային համակարգի: Նշվածից հետո կատարել է հիվանդների ընտրություն լապարասկոպիկ եղանակով վիրահատությունների համար: Կատարված վիրահատություններից հետո կրկին հավաքագրվել են տվյալներ բուժման արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հեռակա: Ատենախոսը կատարել է

այդ տվյալներ մանրակրկիտ համեմատություն, որը աղյուսակների և գծապատկերների տեսքով ներկայացված է ատենախոսության մեջ:

Այդ ամենից հետո եկել է եզրահանգումների, որոնցից է օրինակ այն, որ Boey բալային համակարգը կարելի է արդյունավետ կիրառել 12 մատնյա աղու թափածակված խոցի դեպքում լապարասկոպիկ եղանակով վիրահատությունների համար հիվանդների ընտրության հարցում:

Հեղինկանի կողմից ստացված արդյունքների գիտական և գործնական նշանակությունը

Առաջին անգամ Հայաստանում կատարվել է աշխատանք 12 մատնյա աղու թափածակված խոցերի վիրահատական բուժման համար լապարասկոպիայի կիրառման ուղղությամբ:

Աշխատանքի նպատակն է եղել բարելավել 12 մատնյա աղու թափածակված խոցերի վիրահատական բուժման արդյունքները, մասնավորապես լապարասկոպիայի կիրառման միջոցով, որին հասնելու համար աշխանատքի առաջ դրվել են համապատասխան խնդիրներ: Ա.Ա.Պետրոսյանը ներ է դրել հետվիրահատական բարդությունների կանխատեսման Boey բալային համակարգը 12 մատնյա աղու թափածակված խոցերի ժամանակ լապարասկոպիկ եղանակով վիրահատություններ կատարելու համար հիվանդների ընտրության մեջ: Համատել է ինչպես բաց և լապարասկոպիկ վիրահատությունների արդյունքները, այնպես էլ լապարասկոպիայի ժամանակ կատարված տարբեր միջամտությունների արդյունքները, բարդությունները: Հետազոտել, գնահատել և համեմատել է այդ հիվանդների բուժման հեռակա արդյունքները:

«Ամփոփում» բաժինը արտացոլում է ատենախոսության ամբողջ նյութը: Ներկայացված են արդյունքների համեմատությունը, որից պարզ է դառնում, որ լապարասկոպիկ միջամտության իրականացումը ընտրված, սոմատիկ բավարար վիճակում գտնվող հիվանդների խմբում տալիս են լավ արդյունքներ:

Վերլուծությունից տրամաբանորեն բխել են եզրահանդգումները և գործնական խորհուրդներ:

Աշխատանքն ունի կարևոր գիտագործնական նշանակություն: Գործնական խորհուրդների կիրառումը կարող է բարելավել 12 մատնյա աղու թափածակված խոցի բուժման արդյունքները:

Ատենախության թեմայով հեղինակի հրապարակումների բնութագիրը

Ատենախոսության հիմնական դրույթները տեղ են գտել միջազգային և տեղական գիտաժողովներում և ամսագրերում՝ 18 տպագիր աշխատանքներում և բանավոր զեկույցներում: Ամսագրերի հիմնական մասը ներառված են ԲՈԿ-ի կողմից առաջադրված՝ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչման հայցորդների ատենախոսությանների հիմնական արդյունքների հրատարակման համար առաջարկվող ամսագրերի ցուցակում: Մեկ հոդված տպագրվել է 1-ից ավել ազդեցության գործակից ունեցող (Impact factor) Եվրոպական հեղինակավոր ամսագրում և այլ հեղինակների կողմից ցիտվել է մի քանի անգամ:

Հրապարակումներն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության աշխատանքի բովանդակությունը:

Ատենախեսական աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը շարադրված է 114 էջերի վրա: Բաղկացած է ներածությունից, գրականության տեսությունից, կլինիկական նյութի բնութագիրը և հետազոտության մեթոդները գլխից, սեփական հետազոտության արդյունքները ներկայացնող գլխից, ամփոփումից, եզրահանգումներից, գործնական խորհուրդներից, գրականության ցանկից: Նյութը մշակվել է 17 աղյուսակի և 9 գծապատկերի օգնությամբ: Գրականության ցանկը ներառում է 196 սկզբնաղբյուր:

Եզրահանգում

Արեգ Արտակի Պետրոսյանի ատենախոսական աշխատանքը քննակվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ գիտական խորհրդի թիվ 2 նիստում 2022թ. Սեպտեմբերի 7 –ին:

Պաշտոնական գրախոս՝ ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Ալեքսանդր Արմենի Ուզանկիյան,

Խորհրդի նախագահ՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ գործադիր տնօրեն, բ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Վլադիմիրի Մանուկյան,

Խորհրդի նախագահի տեղակալ՝ «Էրեբունի» բժշկական կենտրոնի տնօրենի տեղակալ վիրաբուժության գծով, ընդհանուր և կրծքային վիրաբուժության բաժանմունքի վարիչ, բ.գ.թ. Արա Վահանի Վարդանյան,

Գիտ. քարտուղար՝ «Էրեբունի» ԲԿ նյարդաբանական և նյարդավիրաբուժական կլինիկայի ղեկավար, բ.գ.դ. պրոֆեղոր Եղունյան Մամիկոն Ա.,

Խորհրդի անդամներ՝ Հարությունյան Յուրի Ա. - «Էրեբունի» ԲԿ ընդհանուր և լապարասկոպիկ վիրաբուժության բաժանմունքի վարիչ, ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի պրոֆեղոր, բ.գ.դ.,

Մինասյան Հարություն Լ. - ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի վարիչի պ/կ, բ.գ.թ., դոցենտ,

Վարդանյան Արտակ Ս. - ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.,

Ֆանարջյան Սերգեյ Վ. - «Էրեբունի» ԲԿ ուրոլոգիայի կլինիկայի ղեկավար, բ.գ.դ., պրոֆեսոր:

Նիստին ներկա էին խորհրդի 10 անդամներից 8-ը:

Քննադատական դիտողություններ

Ատենախոսական աշխատանքի գրախոսության ընթացքում լուրջ դիտողություններ չեն եղել: Ոճական և ուղղագրական սխալները, որոնք առկա են աննշան քանակությամբ, չեն ազդում ներկայացված նյութի իմաստի և աշխատանքի ընկալման ամբողջականության վրա:

Այսպիսով, Արեգ Արտակի Պետրոսյանի «12մատնյա աղու թափածակված խոցի վիրահատական բուժման բարելավումը» թեմայով, ԺԴ 00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը ավարտված գիտական աշխատանք է, որում հեղինակի կողմից առաջադրված դրույթներն ու գործնական առաջարկությունները կարող են որակվել որպես գիտական նվաճում վիրաբուժության մեջ, մասնավորապես 12 մատնյա աղու թափածակված խոցերի ժամանակ լապարասկոպիկ եղանակով վիրահատություններ կատարելու համար:

Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացրած թեկնածուական ատենախոսության բոլոր պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ Արեգ Արտակի Պետրոսյանը արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի կոչմանը:

Աշխատանքը քննարկվել և միաձայն հավանության է արժանացել «Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի 2022թ. Սեպտեմբերի 7-ի գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 2):

«Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ
գործադիր տնօրեն, բ.գ.դ. պրոֆեսոր Մ.Վ.Մանուկյան

«Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ
տնօրենի տեղակալ վիրաբուժության գծով,
ընդհանուր և կրծքային վիրաբուժության
բաժանմունքի վարիչ, բ.գ.թ. Ա.Վ.Վարդանյան

ԵՊԲՀ Վիրաբուժության թիվ 3 ամբիոնի
պրոֆեսոր, բ.գ.դ. Ա.Ա.Ուզանկիչյան